

րանորոգութեան համար աշխատին, թէ՛ օտար բրոքականտին դէմ դնելու համար և թէ ազգային ներքին վերածննդեան նըպաստելու համար:

Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը դարձնելու համար ի վիճակի, մաքառելու համար օտար բրոքականտին դէմ, Զուղայեցիք — վաճառական ու բանգէտ գասակարգին ներկայացուցիչները — փորձ մը ըրին, և 1603ին աթոռ բարձրացուցին Սըրապիոն վրդ. Ուռհայեցին, Ժամանակին ամենէն զարգացած կղերականներէն մին, Հայոց կաթողիկոսութեան ամենէն նսեմացած մէկ պահուն — երբ Դաւիթ Վաղարշապատեցիի պէս անտարբեր և անհոգ և Մելքեսեդեկ Գառնեցիի պէս ապիկար ու զաւրելի տիպար մը կաթողիկոս անունը կը կրէին — հակառակ կամքին երկու կաթողիկոսներուն, որոնք թէև անոր նիւթական զիրքին համար իրեն աթոռակցութիւն առաջարկած էին, սակայն անոր յանդիմանութիւններէն զգածուած՝ յետոյ այդ գաղափարէն հրաժարած էին: Զուղայեցիք այդ երկու ապիկարները մեկուսացնելու պայմանով զինքն աթոռ բարձրացուցին Գրիգոր ԺԳ. անունով: Այս անուանափոխութիւնը շատ պերճախօս փաստ մըն էր թէ անոնք որ այդ երկու ապիկար